

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ  
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ .....	1
1.1. Արդյունաբերություն .....	2
1.2. Շինարարություն .....	3
1.3. Ծառայություններ .....	4
1.4. Առևտուր .....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ .....	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ .....	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ .....	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ .....	10
5.1. Բյուջեի եկամուտները .....	10
5.2. Բյուջեի ծախսերը .....	10
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը .....	13
5.4. Պետական պարտք .....	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ .....	15
6.1. Գնաճ .....	15
6.2. Ավանդներ .....	16
6.3. Վարկեր .....	17
6.4. Դրամական փոխանցումներ .....	19
7. ԱՄՓՈՓՈՒՄ .....	20

## 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով ի հայտ եկած դրական արտաժին գործոնների շնորհիվ նախորդ տարի և այս տարեկազմին արձանագրված բարձր տնտեսական աճը մայիսից (առավել զգալի՝ հունիս և հուլիս ամիսներից) սկսել է աստիճանաբար դանդաղել: Օգոստոսին, այնուամենայնիվ, տնտեսական աճն արագացել էր, և հույս էր ներշնչում, որ հետագա ամիսներին ևս բարձր տնտեսական ակտիվությունը կպահպանվի: Սակայն **սեպտեմբեր ամսին այն դարձյալ կտրուկ դանդաղել է՝ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է ընդամենը 5.6%**: Դանդաղումը հիմնականում պայմանավորված է ծառայությունների աճի տեմպի նվազմամբ և արդյունաբերության անկման խորացմամբ: Հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային ՏԱՑ-ը կազմել է 9.7%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.7 տոկոսային կետով:


**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %**



Ինչպես և նախորդ ամիսներին, սեպտեմբերին ևս ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով: 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընդհանուր ՏԱՑ-ի աճին դրանք նպաստել են համապատասխանաբար 9.1 և 3.1 տոկոսային կետով: Շինարարության ճյուղի նպաստումը նախորդ ամսվա համեմատ մնացել է գրեթե անփոփոխ՝ 0.8 տոկոսային կետ: **Արդյունաբերության նպաստումը 2021թ. ապրիլից ի վեր առաջին անգամ դարձել է բացասական՝ -0.2 տոկոսային կետ:**


Գյուղատնտեսության ոլորտում հունվար-սեպտեմբեր ամիսներին դրական դինամիկա է արձանագրվել, և ոլորտի աճը կազմել է 1.7%՝ ընդհանուր ՏԱՑ-ի աճին նպաստելով 0.2 տոկոսային կետով:

**Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, տոկոսային կետ**



**1.1. Արդյունաբերություն**

**Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %**



**Արդյունաբերության ոլորտի բացասական զարգացումներն ավելի են խորացել:** Արդյունաբերության ոլորտի զարգացումները խիստ մտահոգիչ են՝ արդեն չորս ամիս անընդմեջ արձանագրվում է անկում, իսկ ՍԱՑ-ի աճին ոլորտի նպաստումը 2021թ. ապրիլից ի վեր առաջին անգամ դարձել է բացասական: Սեպտեմբերին ոլորտում անկումը կազմել է 4.3%: Օգոստոսից բացասական է դարձել նաև ոլորտի կուտակային աճը: Հունվար-սեպտեմբերին կուտակային անկումը խորացել է 0.5 տոկոսային կետով և կազմել 0.6%:


Արդյունաբերության հունվար-օգոստոս<sup>1</sup> ամիսների 0.1% անկումը պայմանավորված է եղել հանքարդյունաբերության շուրջ 5.1% նվազմամբ, որն ընդհանուր ճյուղի անկմանը նպաստել է 1.1 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության ենթաոլորտում հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճի տեմպը դեռևս դրական է՝ 0.8%, սակայն օգոստոսին՝ նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ արձանագրվել է 9.4% անկում: Չնայած արդյունաբերության սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել, սակայն, նկատի ունենալով, որ արդյունաբերության ոլորտի ընդհանուր կուտակային ինդեքսն արդեն երկու ամիս բացասական է (ընդ որում ամսեամիս անկումն ավելի շեշտակի է դառնում), ինչպես նաև այն, որ 2023թ. հունիս ամսից սկսած այս ենթաոլորտում անկում է արձանագրվել նույնիսկ այն ամիսներին, երբ ընդհանուր արդյունաբերության ոլորտում թեկուզև աննշան, բայց աճ է գրանցվել, կարելի է ենթադրել, որ էապես դանդաղել է նաև հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային աճի տեմպը:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտի կուտակային աճը կազմել է 3.3% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.4 տոկոսային կետի նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի 5.9% աճն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

## 1.2. Շինարարություն

**Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %**




**Շինարարության ոլորտում ևս արձանագրվել է աճի դանդաղում:** Շինարարության ոլորտի տասներկուամսյա աճը մայիսից ի վեր դանդաղում է և

<sup>1</sup> Արդյունաբերության սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

սեպտեմբերին կազմել է 15.7%՝ օգոստոսի 17.5%-ի և ապրիլի (2023թ. շինարարության ամենաբարձր տասներկուամսյա աճ գրանցած ամսվա) 19.3%-ի դիմաց: Հունվար-սեպտեմբեր ամիսների աճի տեմպի նվազումն ավելի փոքր է՝ 0.3 տոկոսային կետ: Այդ ամիսների կուտակային աճի տեմպը կազմել է 17.0%: Չնայած դանդաղմանը՝ շինարարության ոլորտում պահպանվում են աճի համեմատաբար բարձր տեմպերը՝ հիմնականում պայմանավորված հիպոթեքային վարկերի տոկոսավճարների՝ եկամտային հարկից հետվերադարձի ծրագրի գործողությամբ:

### 1.3. Ծառայություններ

**Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %**



**Ծառայությունների ոլորտի աճի տեմպը եռակի դանդաղել է:** Ծառայությունների ոլորտի աճի տեմպի՝ հուլիսի համեմատ օգոստոսին արձանագրված կտրուկ ավելացումը (5.8%-ից 13.8%) դրական սպասումներ էր ձևավորել, սակայն սեպտեմբերին օգոստոսի համեմատ այն եռակի նվազել է և կազմել 4.6%: Կուտակային՝ հունվար-սեպտեմբեր ամիսների աճը ևս էապես դանդաղել է՝ հասնելով 13.4%-ի՝ նախորդ ամսվա 14.8%-ի և հունվարի 25.9%-ի (տասներկուամսյա աճի՝ 2023թ. արձանագրված ամենաբարձր տեմպը) դիմաց:


Ըստ հունվար-օգոստոս ամիսների տվյալների<sup>2</sup>, ծառայությունների ոլորտում կուտակային աճին առավելապես՝ 8.9 տոկոսային կետով նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտի շուրջ 51.7% աճը: Աճին հաջորդ երկու ամենամեծ նպաստում ունեցած ենթաօլորտներն են՝ «տրանսպորտը» և «կացություն և հանրային սնունդը»՝ համապատասխանաբար 3.8 և 2.1 տոկոսային կետ: «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտում ապրիլ ամսից սկսած նախորդ տարվա նույն ամսվա համեմատ անկում է արձանագրվում, ինչի հետևանքով կուտակային աճի տեմպը հունիս ամսից դարձել է բացասական:

<sup>2</sup> Ծառայությունների ոլորտի սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Այս ենթաաղյուրտի 2023թ. հունվար-օգոստոս ամիսների նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կուտակային անկումը կազմել է 6.2%՝ 1.9 տոկոսային կետով հակազդելով ծառայությունների ճյուղի աճին:

### 1.4. Առևտուր


**Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %**



**Առևտրի աճն արագացել է՝ ամենայն հավանականությամբ հիմնականում պայմանավորված նոր առաջացած արտաձին գործոնով:** Աճի տեմպի ավելացմանը կարող է նպաստած լինել արցախցիների բռնի տեղահանումը, որը բնականաբար, մի կողմից՝ հանգեցրել է սպառողների ընդհանուր թվի ավելացմանը, մյուս կողմից՝ կտրուկ ավելացրել է այդ և հետագա օրերին որոշ ապրանքատեսակների գնման գործարքները: Սեպտեմբերին արձանագրվել է 24.2% աճ, որը նախորդ ամսվա ցուցանիշից բարձր է 0.7 տոկոսային կետով: Հունվար-սեպտեմբեր ամիսների աճի տեմպն ավելացել է 0.2 տոկոսային կետով և կազմել 23.3%:

## 2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

**Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը<sup>3</sup>, %**



**Արտահանման աճի տեմպը վերջին ամիսներին զգալի ցածր լինելուց հետո սեպտեմբերին արագացել է:** Արտահանումը 2023թ. սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 31.5%-ով՝ օգոստոսի համեմատ արագանալով 25.4 տոկոսային կետով: Հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային աճի տեմպը, սակայն, շարունակել է դանդաղել՝ կազմելով 48.5% (որը հունվար-օգոստոսի աճի տեմպից ցածր է 4.0 տոկոսային կետով): Արտահանման կուտակային աճի տեմպի այսպիսի դանդաղումը պայմանավորված է ինչպես բազայի էֆեկտով, այնպես էլ ՀՀ ապրանքների գնային մրցունակության նվազմամբ:

2023թ. հունվար-օգոստոս ամիսների<sup>4</sup> արտահանման աճը հիմնականում «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի՝ համապատասխանաբար 3.2 անգամ, 83.5%-ով և 6.1 անգամ աճերի շնորհիվ է: Դրանք ընդհանուր արտահանման աճին նպաստել են համապատասխանաբար 18.6, 14.5 և 13.1 տոկոսային կետով: Իսկ «հանքահումքային արտադրանք», «բուսական ծագման արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 17.2%, 23.3% և 33.9% նվազումները հակազդել են արտահանման աճին:


<sup>3</sup> Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են:

<sup>4</sup> Արտաքին առևտրի սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:



Հունվար-հուլիսի համեմատ հունվար-օգոստոսի արտահանման կուտակային աճի տեմպի դանդաղումը և առավելապես պայմանավորված է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճի դանդաղմամբ:

**Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը<sup>5</sup>, %**



**Ներմուծման աճի տեմպն էական նվազել է:** Ներմուծման ծավալների աճը 2023թ. սեպտեմբերին կազմել է 5.6%, որը օգոստոսի 13.0% ցուցանիշից ավելի քան կրկնակի ցածր է: Հունվար-սեպտեմբեր ամիսների աճի տեմպը դանդաղել է 7.4 տոկոսային կետով՝ կազմելով 46.4%:

Ներմուծման աճը 2023թ. հունվար-օգոստոս ամիսներին<sup>6</sup> հիմնականում պայմանավորված է եղել այն նույն ապրանքախմբերի ներմուծման աճերով, որոնք առավել էական նշանակություն են ունեցել արտահանման աճի համար՝ «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»: Այդ ապրանքախմբերի նպաստումներն ընդհանուր ներմուծման աճին կազմել են համապատասխանաբար 19.8, 15.6 և 9.6 տոկոսային կետ: Ընդ որում, դրանց նպաստումները վերջին ամիսներին շարունակաբար նվազում են:

<sup>5</sup> Ներմուծման նախորդ ամսվա ցուցանիշը ՀՀ ՎԿ կողմից վերանայվել է:


<sup>6</sup> Արտաքին առևտրի սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

### 3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ<sup>7</sup>

**Միջին ամսական աշխատավարձի կուտակային աճը շարունակում է դանդաղել:** Շնորհիվ տարեսկզբին արձանագրված տպավորիչ աճի տեմպերի (հիմնականում՝ ի հաշիվ բազայի էֆեկտի)<sup>7</sup> նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հունվար-օգոստոս ամիսների միջին ամսական անվանական աշխատավարձի կուտակային աճի տեմպը մնում է բավական բարձր՝ 17.4%: Այնուամենայնիվ, այն ապրիլ ամսից շարունակաբար նվազում է (ընդհանուր առմամբ, աճի տեմպը 2023թ. ամենաբարձր կուտակային աճի տեմպի՝ հունվար-մարտ ամիսների 22.9%-ի համեմատ նվազել է 5.5 տոկոսային կետով):

Հունվար-օգոստոս ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 262,957.0 դրամ: Ոչ պետական հատվածում աճողական միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 289,842.0 դրամ և նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից բարձր է 19.2%-ով (ոչ պետական հատվածում նույնպես կուտակային աճի տեմպը 2023թ. ամենաբարձրը եղել է հունվար-մարտ ամիսներին՝ 26.7%, այնուհետև շարունակաբար նվազել է՝ ընդհանուր առմամբ 7.5 տոկոսային կետով): Պետական հատվածում աճողական միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 197,258.0 դրամ: Այս հատվածում աճն ավելի համեստ է՝ 9.4% (2023թ. հունվար-հուլիսի համեմատ աճն արագացել է 0.1 տոկոսային կետով):


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-օգոստոսին, %**



<sup>7</sup> Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

## 4. ՓՈՒՍԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)**



**Դրամի արժևորման հետ կապված մտահոգությունները մնում են արդիական:** Հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ դրամի արժևորումը կազմել է՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 15.3%, եվրոյի նկատմամբ՝ 13.8%, Ռ-Դ ռուբլու նկատմամբ՝ 37.3%: Հատկանշական է, որ չնայած օգոստոսի համեմատ սեպտեմբեր ամսին ԱՄՆ դոլարի միջին ամսական փոխարժեքի աճը չնչին է, իսկ եվրոյի փոխարժեքը նվազել է, դրանց նկատմամբ ՀՀ դրամի կուտակային արժևորումը շոշափելիորեն

դանդաղում է: Դրա հիմնական պատճառը բազայի էֆեկտն է: Մինչդեռ, ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի կուտակային արժևորումը շարունակում է արագանալ: Այնուամենայնիվ, բոլոր դիտարկվող արժույթների նկատմամբ ՀՀ դրամը շարունակում է մնալ գերարժևորված, ինչը հանգեցրել է արտաքին շուկաներում (հատկապես՝ ՌԴ շուկայում) ՀՀ ապրանքների գնային մրցունակության էական նվազման:

Ամենայն հավանականությամբ արդեն հաջորդ՝ հոկտեմբեր ամսվա ամփոփագրով կարճանագրվի ՀՀ դրամի որոշակի արժեզրկում, որը, սակայն, նույնչափ մտահոգիչ է, քանի որ մրցակցության պաշտպանության մեխանիզմների անբավարար արդյունավետության պարագայում դա հանգեցրել է ներմուծվող մի շարք կարևոր ապրանքատեսակների գնաճի:

**Վերջին իրադարձությունները ևս մեկ անգամ վկայեցին, որ ՀՀ տնտեսությունը բավական զգայուն է անվտանգային մարտահրավերների նկատմամբ:** Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի և Արցախի հայաթափմանը հաջորդած օրերին ՀՀ դրամը փոխանակման կետերում գնվում և վաճառվում էր նախկինի համեմատ 10-15%-ով ավելի բարձր գնով: Ճիշտ է, հետագա օրերին փոխարժեքն աստիճանաբար զգալիորեն նվազեց (սակայն, միևնույն է, չվերադարձավ նախկին դիրքին), այնուամենայնիվ, այս իրավիճակը ևս մեկ անգամ վկայեց այն մասին, որ ՀՀ տնտեսությունը բավական ուժեղ է կրում անվտանգային մարտահրավերների ազդեցությունը: Արտարժույթային շուկայի այս ցնցումները գնաճի նոր ալիքի պատճառ հանդիսացան, որի ազդեցությունը, սակայն, դեռևս շատ թույլ է զգացվում, և սպասվում է, որ հետագա ամիսներին այն ավելի տեսանելի կլինի:

## 5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


### 5.1. Բյուջեի եկամուտները

**Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը փոքր-ինչ արագացել է, սակայն առաջին կիսամյակի ամիսների համեմատ զգալիորեն ցածր է:** Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. սեպտեմբերին աճել են 9.3%-ով, որը օգոստոսի աճի տեմպից բարձր է 0.8 տոկոսային կետով: Հունվար-սեպտեմբեր ամիսներին բյուջեի եկամուտների կուտակային աճը կազմել է 13.8%, որը հունվար-օգոստոսի ցուցանիշից ցածր է 0.7 տոկոսային կետով:

2023թ. սեպտեմբերին բյուջեի հարկային եկամուտների աճն արագացել է: Աճի տեմպը կազմել է 11.8%: Հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային աճը, ընդհակառակը, դանդաղել է 0.5 տոկոսային կետով և կազմել 15.0%: **Հարկային**

Եկամուտների աճի տեմպի դանդաղման գլխավոր պատճառը ընդհանուր տնտեսության ակտիվության նվազումն է:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը սեպտեմբերին ևս (ինչպես նախորդ հինգ ամիսներին) մեծ չափով պայմանավորված է հիմնական խոշոր հարկատեսակների՝ շահութահարկի (աճը՝ 43.6%) և ԱԱՀ-ի (աճը՝ 15.0%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 6.0 և 5.0 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին ամենամեծ չափով՝ համապատասխանաբար 3.1 և 2.1 տոկոսային կետով հակազդել են պետական տուրքերի 47.9%-ով և բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի 41.2%-ով նվազումները:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2022թ. հունվար-սեպտեմբեր		2023թ. հունվար-սեպտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
<b>Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք</b>	<b>24.2</b>	<b>24.2</b>	<b>15.0</b>	<b>15.0</b>
ԱԱՀ	22.2	7.5	15.0	5.0
Շահութահարկ	46.4	5.4	43.6	6.0
Եկամտային հարկ	9.5	2.7	16.1	4.0
Ակցիզային հարկ	12.0	0.8	12.4	0.7
Շրջանառության հարկ	27.8	0.6	29.7	0.6

<b>Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար</b>	48.8	2.1	-41.2	-2.1
<b>Մաքսատուրք</b>	-34.6	-1.9	58.9	1.4
<b>Սոցիալական վճար</b>	47.1	1.3	43.4	1.4
<b>Այլ հարկային եկամուտներ</b>	18.1	0.5	36.0	1.0
<b>Պետական տուրք</b>	163.0	4.9	-47.9	-3.1

## 5.2. Բյուջեի ծախսերը

**Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ**




**Սեպտեմբերին պետական բյուջեի ծախսերի աճն էապես դանդաղել է:** Սեպտեմբեր ամսին պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա սեպտեմբերի ցուցանիշից ավել են ընդամենը 6.4%-ով, մինչդեռ օգոստոսին այդ ցուցանիշը 18.2% էր: Ընդհանուր ծախսերի հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային աճը նույնպես դանդաղել է՝ 12.7%՝ հունվար-օգոստոսի 13.7%-ի դիմաց: Ընդհանուր ծախսերի աճին ընթացիկ ծախսերի 9.9% աճը նպաստել է 8.7 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն<sup>8</sup> աճել են ավելի արագ տեմպով՝ 33.6%-ով և ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 4.0 տոկոսային կետով: **Չնայած այդ զգալի աճին, հունվար-սեպտեմբեր ամիսներին իրականացված կապիտալ ծախսերի ծավալը՝ 238.2 մլրդ դրամը, դեռևս էապես՝ 39.4%-ով, զիջում է 2023թ. պետական բյուջեով հաստատված՝ ինն ամիսների պլանային ցուցանիշին՝ 393.0 մլրդ դրամին:**

<sup>8</sup> Դրանք հիմնականում կապիտալ ծախսերն են:

### 5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային, իսկ դրա կատարման շեղումն ամսեամիս ավելանում է: ՀՀ պետական բյուջեն 2023թ. բոլոր ամիսներին եղել է հավելուրդային՝ պլանավորված պակասուրդայինի փոխարեն: Բյուջեի հունվար-սեպտեմբեր ամիսների հավելուրդը կազմել է 74.6 մլրդ դրամ՝ պլանավորված 196.2 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Այսինքն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է 270.8 մլրդ դրամով: Ընդ որում, ծախսերի քիչ լինելը ավելի քան կիսով չափ պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչը վկայում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված խնդիրները դարձել են «քրոնիկ»:


### 5.4. Պետական պարտք

ՀՀ պետական պարտքը շարունակում է աճել: Աճում է նաև կառավարության պարտքը՝ հիմնականում դրամային պարտքի հաշվին: Նախորդ ամսվա վերջի համեմատ 2023թ. սեպտեմբերի վերջին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալը նվազել է 64.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 0.6%-ով, մինչդեռ, դրամային արտահայտությամբ այն օգոստոսի վերջի համեմատ աճել է 59.1 մլրդ դրամով կամ 1.3%-ով: Պատճառը ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումն է: Այս հանգամանքը մտահոգիչ ազդակ է և «հիշեցնում» է, որ դրամի արժեզրկման պարագայում դրամային արտահայտությամբ պետական պարտքի մակարդակը կարող է էապես աճել՝ հակազդելով պարտք/ՀՆԱ ցուցանիշի կայունացման ուղղությամբ կատարվող քայլերին: Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ 2023թ. սեպտեմբերին, ինչպես և օգոստոսին, դոլարային արտահայտությամբ պետական պարտքի աճը կազմել է 14.0%: Դրամային արտահայտությամբ՝ ՀՀ պետական պարտքի աճի տեմպը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ 10.5% է՝ օգոստոսի վերջի 8.7%-ի

դիմաց: Կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ աճել է 14.8%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 11.3%-ով: Արվող դատողությունների մեջ փոխարժեքի ազդեցությունը հնարավորինս «չեզոքացնելու» համար առավել նպատակահարմար է ներքին պարտքը դիտարկել դրամային, իսկ արտաքինը՝ դոլարային արտահայտությամբ: Այս մոտեցմամբ առաջնորդվելու դեպքում կարելի է արձանագրել, որ սեպտեմբերին ներքին պարտքը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 23.1%, իսկ արտաքին պարտքը՝ 6.6%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում աճել է ևս 0.7 տոկոսային կետով՝ սեպտեմբերի վերջի դրությամբ կազմելով 44.5%:

**2023թ. սեպտեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է:** Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ նվազել է ևս 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 10.3%: Միջնաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը սեպտեմբերին նույնպես նվազել է 0.2 տոկոսային կետով և կազմել 10.55%:

**Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %**






## 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



**2023թ. սեպտեմբերին գնաճը դարձյալ դրական է դարձել:** Հունիս ամսից արձանագրվող գնանկումը սեպտեմբերին դադարել է, և գնաճը դարձյալ մտել է դրական տիրույթ՝ կազմելով 0.1%: Չնայած դրան, 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսների՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կուտակային աճը շարունակել է դանդաղել և կազմել է 2.8%, որը նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշից պակաս է 0.3 տոկոսային կետով: Գնաճի՝ դրական տիրույթ վերադառնալու հիմնական պատճառներից կարող է լինել ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի ընդհանուր առմամբ 1.0 տոկոսային կետով (երեք անգամ՝ հունիսին, օգոստոսին և սեպտեմբերին) նվազեցումը:


## 6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



**2023թ. սեպտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների աճը դանդաղել է:** Ճիշտ է, 2023թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշից 20.1%-ով ավելի է, սակայն այդ աճն ամսեամիս դանդաղում է՝ 2023թ. ամենաբարձր աճ գրանցած ամսվա՝ ապրիլի համեմատ գումարային դանդաղումը կազմում է 11.1 տոկոսային կետ: Սեպտեմբերին ռեզիդենտների ավանդների աճը կազմել է 21.9%, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 14.6%: **Ընդ որում, օգոստոսի համեմատ դանդաղել է ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճը՝ համապատասխանաբար 1.9 և 14.7 տոկոսային կետով:**

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին ամենամեծ նպաստումն ունեցել են տնային տնտեսություններից և ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճերը՝ համապատասխանաբար 9.7 և 5.6 տոկոսային կետով: Ավանդների ընդհանուր աճին զգալիորեն՝ 3.7 տոկոսային կետով, նպաստել է նաև ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճը:

### 6.3. Վարկեր


**Վարկերի ծավալների աճը շարունակում է արագանալ:** Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ընդհանուր ծավալը 2023թ. սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշից ավելի է 19.3%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.6 տոկոսային կետով:

**Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %**




Վարկերի աճին նպաստել են թե՛ ռեզիդենտներին և թե՛ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 19.2% և 20.6%, իսկ նպաստումները՝ համապատասխանաբար 18.2 և 1.1 տոկոսային կետ:

**Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %**



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճն արձանագրվել է շնորհիվ թե՛ տնային տնտեսություններին և թե՛ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճի: Դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.6 և 8.6 տոկոսային կետ:

**Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ**




Ռեզիդենտների<sup>9</sup> շարքում կտրուկ՝ ավելի քան 2.3 անգամ, ավելացել է «այլ ճյուղերին» տրամադրված վարկերի ծավալը: Դրանք վարկերի աճին ունեցել են 4.1

<sup>9</sup> Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը

տոկոսային կետ նպաստում: 4.0-ական տոկոսային կետի դրական նպաստում են ունեցել հիպոթեքային և ծառայությունների ոլորտին տրամադրվող վարկերը, որոնց աճը կազմել է համապատասխանաբար 20.3% և 23.9%: Վարկերի աճին էական՝ 3.0 տոկոսային կետ նպաստում է ունեցել նաև սպառողական վարկերի 14.3% աճը: Շինարարության և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալները նույնպես աճել են, սակայն ընդհանուր վարկերի աճին դրանց նպաստումն ավելի փոքր է: **Արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալը 27 ամիս շարունակ նվազում է:** Սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազումը կազմել է 5.3%՝ ընդհանուր վարկերի ծավալի աճին հակազդելով 0.7 տոկոսային կետով: Այս հանգամանքը նույնպես վկայում է արդյունաբերության ոլորտում լուրջ խնդիրների առկայության մասին:

#### 6.4. Դրամական փոխանցումներ

**Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը<sup>10</sup>, մլն ԱՄՆ դոլար**



**Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ ամսվա համեմատ զգալիորեն աճել է, սակայն շարունակում է էապես զիջել նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշին:** 2023թ. օգոստոսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 202.4 մլն ԱՄՆ դոլար, ինչը մարտից ի վեր ամենաբարձր ցուցանիշն է, սակայն նախորդ տարվա նույն ամսվա

բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

<sup>10</sup> Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: Սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ցուցանիշին զիջում է 30.5%-ով: Ընդ որում, այդպիսի նվազումն արձանագրվել է, քանի որ, չնայած ներհոսքի 9.6%-ով աճին, արտահոսքն աճել է բազմապատիկ անգամ ավելի բարձր տեմպով՝ 74.0%-ով:

## 7. ԱՄՓՈՓՈՒՄ

**1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը որոշակիորեն արագանալուց հետո, սեպտեմբերին կտրուկ դանդաղել է՝** հիմնականում պայմանավորված ծառայությունների աճի տեմպի դանդաղմամբ և արդյունաբերության անկման տեմպի խորացմամբ: Ծառայությունների աճի տեմպի դանդաղումն իր հերթին հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով, սակայն սեպտեմբերին ծառայությունների ոլորտի վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով Արցախում տեղի ունեցող դեպքերը:

**2. Արդյունաբերության ոլորտի բացասական զարգացումներն ավելի են խորացել և շարունակում են մտահոգիչ մնալ:** Արդյունաբերության ոլորտում արդեն երկար ժամանակ գրանցվում են անկման ցուցանիշներ: Ընդ որում, անկում է գրանցվում ինչպես հանքարդյունաբերությունում, այնպես էլ մշակող արդյունաբերությունում: Այսպես, սեպտեմբերին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 4.3% անկում, իսկ մշակող արդյունաբերությունում, օգոստոսի տվյալներով, գրանցվել է շուրջ 9.4% անկում: Այս իրավիճակը խոսում է ՀՀ տնտեսության ներուժի և մրցունակության անկման մասին, ինչը ապագայում կհանգեցնի տնտեսական աճի տեմպի պերմանենտ դանդաղմանը:

**3. Պետական բյուջեի կատարումը շեղվել է պլանավորվածից շուրջ 270.8 մլրդ դրամով:** Պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային, իսկ դրա կատարման շեղումն ամսեամիս ավելանում է: ՀՀ պետական բյուջեն 2023թ. բոլոր ամիսներին եղել է հավելուրդային՝ պլանավորված պակասուրդայինի փոխարեն: Բյուջեի հունվար-սեպտեմբեր ամիսների հավելուրդը կազմել է 74.6 մլրդ դրամ՝ պլանավորված 196.2 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Այսինքն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է 270.8 մլրդ դրամով: Պետական բյուջեի ծախսերի աճն էապես դանդաղել է: Ընդ որում, ծախսերի քիչ լինելը ավելի քան կիսով չափ պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչը վկայում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված խնդիրները դարձել են «քրոնիկ»:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**